ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**№ ՐՂ/373-2022_Ա**

**ք.Արտաշատ**

**,, 12 ,, դեկտեմբերի 2022թ.**

ԳՈՀԱՐ. ՎԱՉԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալի, մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 7-ին <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված այցի ժամանակ հայտնաբերված խախտումները և դպրոցի տնօրենի՝ 08"12.2022 թվականի բացատրագիրը.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջը ոչ պատշաճ կատարելու, դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 10-րդ, 13-րդ և 17-րդ ենթակետերը խախտելու համար <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհար Վաչիկի Սահակյանի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժ:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ